Աչքերը շուռ եկան, ձեռքերը դալարուեցին եւ չանթահարուած՝ մնացին անշարժ:

Երեք օր, երեք գիշեր, Ուրալից մինչեւ Արարատ, Վոլգայից մինչեւ Դանուբ, մինչեւ Զանգու, ասաը մի հով մրրկեց

Եւ Ռուսաստանը ռետինի նման լարուեց:

Ես, Իոհան Թագաւոր...

Եւ Ռուսաստանը ռետինի նման լարուեց: Կովկասեան լեռնաշղթան գլուխը թեքեց, եւ արծիւները վերջապէս կարողացան մօտենալ Պրոմեթեւսի սրտին: Լո՛յս, լո՛յս: Արդէն ուշ էր. գերմանացի պրոֆեսորի ականջը կանգ առաւ Լենինի կրծքի վրայ, եւ շտապ, խողովակը վար նետեց: «Պարոնայք, ընդհանուր լռութեան մէջ յայտարարեց պրոֆեսորը, համաշխարհային յեղափոխութեան սիրտը կանգնելու վրայ է. մարմինը անդամալոյծ է, դէմքը ծռուել է եւ շրթունքների վրայ լորձունք կայ»...

Ի զուր կամքար եւ սնդիկ քսեցին՝ մկանունքները չէին շարժւում: Զորացած ծառի նման Լենինը խշշում էր ամենափոքրիկ քամու առջեւ: Պատմութեան արօրը կպել էր ժայռին եւ ռուսական երկիրը բարկացած կատուի նման բարձրացրել էր մէջքը.—

Մեռել է Իոհան Թագաւորը,

Մեռել է Իոհան Թագաւորը,

Մեռել է Իոհան Թագաւորը:

Կրեմլինի առջեւ, պահակները կրակեցին:

Ամէն մարդ ուրախութիւնից աղօթում էր: Ռադիո-կայանները կատաղել էին.

— Ատլանտիկի վրայ փոթորիկ էր.

— Կիէվի մայր եկեղեցում իկոնները խոսում էին.

— Զմուռաեցէք այդ աստուածը— հրամայեցին:

Վա՛տ հոտ է դալիս:

3.

Կուլտուրական Տան առջեւ իշխանութիւնը զետեղել է Կարլ Մարքսի եւ Էնգելսի չափից դուրս մեծ գլուխները:

Կաւ է:

Զնայած իրենց տարօրինակ մեծութեան, քաղաքացիները առհասարակ նրանց չեն տեսնում: Մի բան է էլի, դրել են:

Խորհրդային Հայաստանի պաշտօնական այն Ֆիդիասը, որ այդ գլուխները շինել է, կաւ չէ խնայել: Դիմագծերը ճզմուած են առատ մազերի եւ առատ մօրուքի մէջ, ու առաքեալները նայում են աֆրիկեան արանգուտանների նման: Ամառը, կոհականման եւ թափթփած այդ մօրուքների մէջ մժեղները եւ սարդերը բոյն են դնում, իսկ ձմեռը՝ բոլոր այդ խորդուբորդութիւնների վրայից կեղտոտ ջուր է հոսում: Կաւը թրջւում է, փափկանում ու կտոր կտոր վայր ընկնում:

Չկա՛յ Երեւանում աւելի տխուր բան, քան այդ յաւակնոտ մեռածութիւնը:

Երբ նայում եմ նրանց, անծայր մի մելամաղձութիւն լեցնում է սիրտս: Փխրուն եւ դժբախտ այդ մեծութիւնը պատուհանների տակ սեղմուած, այլափոխուած ու ցեխոտ դէմքերով: Բանտուած հոգիների պարտէզում լքուած արձանը...

Ու ամէն ինչ ա՜յնքան հասկանալի է... Հարաղատ նշանարանը ամբողջ մի մտայնութեան: Փոշիների տակ պառկած խօսքերի շարժբուղ որդը: Նեղմիտ, փոքրհոգի, մեքենական ձեւերով, զորշ դաւառը:

Բարեբախտաբար, անցորդը անցնում է եւ չի տեսնում:

Իսկ եթէ տեսնում է՝

— Մի բան է էլի, դրել են:

Այսօր —

Թերթերի սեւ շրջագծերի մէջ Լենինը անշունչ պառկել է—

Այսօր, կաւէ այդ գլուխները, ցեխերի միջից ոտքի բերած տաւարի նման, մի տեսակ, հանդիսաւոր արտայայտութիւն ունեն: Կարծես, աւելի վեր են բարձրացել: Իրենց ճակատը դէմ են տուել սառը հովին: Ուռել են, ու Աբովեան փողոցին նայում են, արձաններին յատուկ ճերմակ նայուածքով:

Իսկ Աբովեան փողոցը քայլում է մատների վրայ:

Զգուշօրէն:

Անցորդը անցնում է արագ, ծռում փողոցը, մտնում տուն:

Գիւղացիներն էլ չեն իմանալ: Բնական է՝

— Լենինը մեռել է...

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան